


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Զ Ե Կ ՈՒ Յ Ց
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ
2014 ԹՎԱԿԱՆԻՆ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Զ Ե Կ ՈՒ Յ Ց

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ
2014 ԹՎԱԿԱՆԻՆ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ

Տեղեկատվության բազմազանմամբ և տեղեկատվական հոսքերի ինտենսիվացմամբ բնութագրվող արդի աշխարհում էապես կարևորվում է «վիճակագրական եռանկյունու անկյունները զբաղեցնող», տարաբևեռ հակումներ ունեցող, պաշտոնական վիճակագրության երեք մասնակիցների՝ ռեսպոնդենտների, սպառողների և հարկատուների հնարավորին «մեկտեղումը», հատկապես՝ ազգային և միջազգային չափանիշներով պերցեպցիայի (կոմունիկացիոն ունակությունների համահարթեցման) պահանջների տեսանկյունով:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ) շնորհակալություն է հայտնում բոլոր ռեսպոնդենտներին (տեղեկատվություն տրամադրողներին), որոնց կողմից տրամադրված տեղեկատվության վրա է հիմնված սույն վիճակագրական հրապարակումը և ողջունում նրանց ու հարկատուների՝ որպես վիճակագրական տեղեկատվության սպառողների՝ արձագանքներն ու առաջարկները վերոհիշյալ նկատառումներով վիճակագրական հրապարակումների հետագա կատարելագործման համար:

Հրապարակումների հետագա կատարելագործման համար առաջարկությունները և մեկնաբանությունները խնդրում ենք ներկայացնել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին:

0010, Երևան, Հանրապետության պողոտա, Կառավարական շենք, 3

☎ (+ 374 10) 52-33-56

Ֆաքս՝ (+ 374 10) 52-19-21

Էլեկտրոնային փոստ info@armstat.am

ՀՀ ԱՎԾ կայքէջեր՝ <http://www.armstat.am> (հայելային կայքէջ՝ <http://www.armstat.info>),

<http://www.armstatbank.am> , <http://www.armdevinfo.am>

Պայմանական նշաններ

երևույթը բացակայում է

-

Առանձին դեպքերում բաղադրիչների գումարի և արդյունքի միջև
աննշան տարբերությունները բացատրվում են տվյալների կլորացմամբ:

© ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, 2014

Բովանդակություն

Բովանդակություն.....	3
Ներածություն	4
Վիճակագրական տեղեկատվության սպառողները և վիճակագրական տեղեկատվության տարածումը	5
Հետազոտության նպատակը.....	7
Ընդհանուր արդյունքները.....	7
Հիմնախնդիրներ.....	39
Առաջարկություններ.....	40
Եզրակացություններ	41
Հավելված 1`	
«Վիճակագրական տեղեկատվության սպառողների հետազոտության» հարցաթերթը	43
Հավելված 2`	
«Վիճակագրական տեղեկատվության սպառողների հետազոտության» հարցաթերթի պատասխանների արդյունքներն աղյուսակային ներկայացմամբ	47

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (հետայսու՝ ՀՀ ԱՎԾ) առաքելությունն է հանրության համար պաշտոնական վիճակագրության հավաքագրումը, հրապարակումը և տարածումը: Տվյալների որակը, սպառողների վստահությունը և պրոֆեսիոնալ անկախությունը կան և կմնան ՀՀ ԱՎԾ նախապատվային խնդիրները:

«Վիճակագրություն» տերմինը (եզրույթը) ծագել է լատինական «status» բառից, որը նշանակում է երևույթի վիճակ, դրություն: Այս տերմինը միանշանակ չէ: Վիճակագրությունը հասարակական կյանքի քանակական տարբեր կողմերը (արտադրություն, արդյունքի բաշխում և փոխանակում, քաղաքականություն, մշակույթ, առողջապահություն, բնակչության կենսամակարդակ և այլն) բնութագրող ամփոփ ցուցանիշների ամբողջությունն է, ինչպես նաև համապատասխան տվյալների հավաքագրման և ընդհանրացման գործընթացը:

Այն գիտություն է, որն արտացոլում է երևույթների «**վիճակների նկարագրությունը (փաստումը)**» թվային տվյալներով:

Վիճակագրությունը բնութագրվում է մյուս ոլորտների համեմատ առաջանցիկ զարգացմամբ, տվյալների հավաքագրման, մշակման, ամփոփման մեթոդաբանության մշտական կատարելագործման անհրաժեշտությամբ, երկրի տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական, բնապահպանական ցուցանիշները բովանդակող տեղեկատվության նկատմամբ պահանջարկի մշտական աճով:

Պետական վիճակագրությունը պետական վիճակագրություն իրականացնող մարմնի (ՀՀ ԱՎԾ) գործունեությունն է՝ ուղղված սոցիալ-տնտեսական, հասարակական երևույթների և գործընթացների որակական և քանակական հարաբերությունների ժամանակի և տարածության որոշակի պայմաններում դրսևորվող օրինաչափությունների թվային բնութագրմանը:

Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներն են.

(ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 47-րդ նստաշրջանում՝ Ժնև, 15.04.1992թ. և ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի կողմից՝ 14.04.94թ.)

1. Նշանակալիություն, օբյեկտիվություն և մատչելիություն
2. Պրոֆեսիոնալ ստանդարտներ և էթիկա
3. Հաշվետվություն և թափանցիկություն
4. Միալ օգտագործման կանխում
5. Պաշտոնական վիճակագրության աղբյուրներ
6. Գաղտնիություն
7. Օրենսդրություն
8. Ազգային համակարգում
9. Միջազգային ստանդարտների օգտագործում
10. Միջազգային համագործակցություն

**Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքով
սահմանված սկզբունքները**

(ընդունված վիճակագրական ծրագրային կոմիտեի կողմից՝ 24.02.2005թ.)

1. Մասնագիտական անկախություն
2. Տվյալների հավաքագրման իրավասություն
3. Ռեսուրսների բավարարվածություն
4. Որակի ապահովման պարտավորություն
5. Վիճակագրական գաղտնիություն
6. Անաչառություն և օբյեկտիվություն
7. Մեթոդաբանության հիմնավորվածություն
8. Վիճակագրական գործընթացների հիմնավորվածություն
9. Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափավորություն
10. Արդյունավետություն
11. Արդիականություն
12. Ճշգրտություն և հուսալիություն
13. Յուրաժամանակություն և ճշտապահություն
14. Փոխկապակցություն և համադրելիություն
15. Մատչելիություն և պարզություն

«Եվրամիության և համագործակցության անդամ երկրների վիճակագրական մարմինների անկախության, ամբողջականության և հաշվետու լինելու մասին» հանձնաժողովի կոմունիկատը Եվրամիության Պառլամենտին և Խորհրդին, Բրյուսել, 25.05.2005թ.:

Պետական վիճակագրության իրագործման հիմքը **«Պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրն»** է, որը մշակվում է վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա: Ծրագրում ներառվում են նաև վիճակագրական տեղեկատվության սպառողների ցանկը, նրանց տրամադրվող տեղեկատվության կազմը և տրամադրման կարգը:



**ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՈՂՆԵՐԸ
ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ**

Վիճակագրությունն անհրաժեշտ է տեղեկատվական հասարակության բոլոր տարրերին՝ պետական կառավարման մարմիններին, ֆինանսական, հասարակական և միջազգային կազմակերպություններին, տնտեսավարող սուբյեկտներին, գիտակրթական շրջաններին, զանգվածային լրատվամիջոցներին, և ընդհանրապես, հասարակության լայն շրջաններին: Որպես հանրային շահ հետապնդող մարմին, ՀՀ ԱՎԾ-ն վիճակագրական տեղեկատվության սպառողների ցանկը չի սահմանափակում և շարունակական աճելու միտումներ ունի:

Վիճակագրության կարևորագույն նպատակներից մեկը սպառողներին իրենց պահանջարկին համապատասխանող վիճակագրական արտադրանք տրամադրելն է: Վիճակագրության կատարելագործման առաջնահերթ ուղղություններից մեկը վիճակագրական

տեղեկատվության տարածման փորձի և դրա վարման քաղաքականության նորացումն ու այդ բնագավառում նոր մոտեցումների կիրառումն է:

Արդի տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում հաշվի առնել սպառողների պահանջմունքների ավելի լայն շրջանակ: Սակայն այդ բնագավառում ՀՀ ԱՎԾ-ն, ինչպես և ցանկացած երկրի վիճակագրական ծառայություն, անխուսափելիորեն բախվում է ռեսուրսների (ֆինանսական, կադրային և այլն) իրական սահմանափակումներին:

Վիճակագրական տվյալների տարածումը ներառում է բազմաբնույթ գործողությունների կատարում էլեկտրոնային և թղթային եղանակներով, փոստի, հեռախոսի, գրադարանի, համացանցի, մամուլի ասուլիսների, շնորհանդեսների, գիտական և այլ բնույթի համաժողովների միջոցով վիճակագրության մեթոդաբանության (մեթատվյալների), վիճակագրական տվյալների և վիճակագրական հրապարակումների (ժողովածուներ, զեկույցներ և այլն) տարածում:

ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկատվությունը հասանելի է՝ համացանցի և բաց գրադարանի միջոցով, որոնցում առկա են ՀՀ ԱՎԾ բոլոր հրապարակումները: ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջի (<http://www.armstat.am>) Գլխավոր էջի ստորին հատվածում տեղադրվում են տվյալ ամսվա թողարկումները, ինչպես նաև «Վիճակագրական հրապարակումների համացանկը», «Հայաստանի վիճակագրական տարեգիրքը», «Հայաստանի ազգային հաշիվները» վիճակագրական ժողովածուները, «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը և 3-5 նոր հրապարակումներ: Ձեռնդրված են նաև «Հիմնական վիճակագրական տվյալներ» տեղեկատվական բազան, «Վիճակագրական հրապարակումների ժամանակացույցը», «Տվյալների թողարկման օրացույցն ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների տարածման հատուկ ստանդարտի (SSՀՄ)», «Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) վերանայման ժամանակացույցը», «Նորություններ», «Իրադարձություններ», «Նախագծեր» և այլ հատվածներ, որոնք միտված են դյուրինացնել վիճակագրական տեղեկատվության սպառողի ցանկացած փնտրումը:

Հարկ է նշել, որ միայն 2013թ.-ի ընթացքում ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջի ինտերնետային հանգույց են այցելել մոտ 218 000 անգամ, ինչը 6 000-ով կամ 3%-ով ավելի է 2012թ. համապատասխան ցուցանիշից:

ՀՀ ԱՎԾ www.armdevinfo.am և www.armstatbank.am կայքէջերում առկա են բազմաթիվ վիճակագրական տեղեկատվական բազաներ, տարբեր ոլորտները բնութագրող վիճակագրական աղյուսակներ (բազաներ):

ՀՀ ԱՎԾ բաց գրադարանում 2013թ. տարեվերջին առկա է եղել 11 750 անուն վիճակագրական գրականություն, որից 450-ը ստացվել է 2013թ. ընթացքում: Այն համալրվել է աշխարհի տարբեր երկրների վիճակագրական ծառայություններից և միջազգային կազմակերպություններից (55%), ինչպես նաև ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակված վիճակագրական հրապարակումների հաշվին (45%):



ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Վիճակագրական տեղեկատվություն սպառողների շրջանում իրականացված սույն հետազոտության նպատակը Հայաստանի Հանրապետությունում վիճակագրական տեղեկատվություն սպառողների պահանջարկի ուսումնասիրումն է և դրա հիման վրա պահանջարկի բավարարման հետագա բարելավումը:

Դրան հասնելու հիմնական ուղղություններից մեկը վիճակագրական հրապարակումների հետագա կատարելագործումն է՝ բազմաբովանդակ և բազմաբնույթ նյութերի պատրաստումը, կարճ ժամանակահատվածում վիճակագրական տեղեկատվության նկատմամբ սպառողի ընթացիկ պահանջարկի հնարավորինս բավարարումը:

Հիշյալ նկատառումներով պայմանավորված, ինչպես նաև վիճակագրական տեղեկատվության նկատմամբ սպառողների հետ մշտական կապն ապահովելու, նրանց վերաբերմունքի, ակնկալիքների և պահանջմունքների ուսումնասիրության նպատակով, ՀՀ ԱՎԾ մշտապես իրականացնում է վիճակագրական հետազոտություն վիճակագրական տեղեկատվության սպառողների շրջանում, որի արդյունքում պարբերաբար հստակեցվում են վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջմունքներն ու վիճակագրական աշխատանքների ցանկը:

Ընտրանքային սույն հետազոտության իրականացման համար մշակվել է վիճակագրական հարցաթերթ՝ ակնկալելով ստանալ անկաշկանդ պատասխաններ, որոնք կնպաստեն ՀՀ ԱՎԾ գործունեության հետագա առաջընթացին, մասնավորապես վիճակագրության մատուցման որակի հետագա բարելավմանը: Հետազոտության արդյունքներն ամփոփված են սույն զեկույցում:



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ ԱՎԾ-ն 2014թ. հունվարին վիճակագրական տեղեկատվության սպառողների շրջանում իրականացրել է ընտրանքային հետազոտություն՝ **«Վիճակագրական տեղեկատվության սպառողներ»** հարցաթերթով (տե՛ս Հավելված 1):

ՀՀ ԱՎԾ-ն մինչ հետազոտությունը, հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, նախապես ուսումնասիրել է վիճակագրական տեղեկատվության սպառողների հիմնական կազմը, ընտրանք կատարել և ընդգրկել նրանց, ովքեր ՀՀ ԱՎԾ-ի հետ շարունակական կապի մեջ են և ակտիվ համագործակցում են: Այդ սպառողներին տրամադրվել են հարցաթերթի թղթային տարբերակներ՝ ակնկալելով ազատ ու անկաշկանդ պատասխաններ: Հարցաթերթի թղթային տարբերակներ են տրամադրվել նաև ՀՀ ԱՎԾ բաց գրադարան այցելած բոլոր այցելուներին:

Անկեղծ և թափանցիկ պատասխաններ ստանալու և հետազոտության ընտրանքն առավելագույնս ընդլայնելու ակնկալիքով հարցաթերթի էլեկտրոնային տարբերակը (հայերեն և անգլերեն) վիճակագրական սպառողներին հղված գրությամբ տեղադրվել է ՀՀ ԱՎԾ կայքէջի՝ <http://www.armstat.am> (հայելային կայքէջում նույնպես՝ <http://www.armstat.info>) Գլխավոր էջում (տե՛ս ՀՀ ԱՎԾ կայքէջի Գլխավոր էջի ստորին աջ անկյուն):

Հետազոտության մեջ ընդգրկված վիճակագրական տեղեկատվության սպառողները խմբավորված են 10 հիմնական խմբերում: Դրանց ներկայացուցիչներն են.

- ✓ պետական կառավարման ոլորտի,
- ✓ ֆինանսական կազմակերպությունների,
- ✓ գործարար համայնքի,
- ✓ արհմիությունների,
- ✓ լրատվամիջոցների,
- ✓ քաղաքացիական հանրության,
- ✓ հետազոտական հաստատությունների,
- ✓ գիտակրթական հաստատությունների,
- ✓ միջազգային կազմակերպությունների,
- ✓ այլ սպառողների:

Հետազոտության արդյունքներն ամփոփվել են 2014թ. մարտի 1-ի դրությամբ: Հարկ է նշել, որ հարցաթերթերի պատասխան-արձագանքները ստացվել են լրացնողների ընդհանուր թվաքանակի 68.4%-ից: Հետազոտության հարցաթերթը ներառում է 13 հարց: Ստորև ներկայացվում են հետազոտության հարցաթերթի պատասխանների ամփոփ արդյունքները:


Հարց 1.

Վիճակագրական տեղեկատվության սպառողների ո՞ր խմբին էք պատկանում.

Լրացված հարցաթերթերի ամփոփման արդյունքներից պարզվել է, որ սպառողների 1/3-ը պետական կառավարման ոլորտի ներկայացուցիչներն են: Երկրորդ խոշոր խումբը (16.0%) քաղաքացիական հանրությունն է (հասարակական կազմակերպություններ, անհատներ): Երրորդ և չորրորդ դիրքերը գրեթե հավասարաբար են կիսել գիտակրթական հաստատությունների (12.9%) և գործարար համայնքի ներկայացուցիչները (11.1%): Բավական մեծ խումբ են կազմել (9.0%) այն հարցվողները, որոնք լրացրել են պատասխանի «այլ» վանդակը: Հարցման մասնակիցների փոքր խմբեր են կազմել ֆինանսական կազմակերպությունների (5.6%), լրատվամիջոցների (4.4%), հետազոտական հաստատությունների (3.2%), միջազգային կազմակերպությունների (3.0%) և արհմիությունների (1.5%) ներկայացուցիչները (տե՛ս զծապատկեր 1 և աղյուսակ 1՝ էջ 47):

Հետազոտությանը մասնակցած վիճակագրական տեղեկատվության սպառողներն ըստ խմբերի, %-ով

Գծապատկեր 1



- (1) պետական կառավարման մարմիններ
- (2) ֆինանսական կազմակերպություններ
- (3) գործարար համայնք
- (4) արհմիություններ
- (5) լրատվամիջոցներ
- (6) քաղաքացիական հասարակություն (հասարակական կազմակերպություններ, անհատներ)
- (7) հետազոտական հաստատություններ
- (8) գիտակրթական հաստատություններ
- (9) միջազգային կազմակերպություններ
- (10) այլ

Հարց 2.


Ինչպիսի՞ս պաշտոնական վիճակագրություն էք Դուք օգտագործում.

Հարցը մանրամասնեցված է, քանզի ՀՀ ԱՎԾ-ի համար էական է, թե վիճակագրական տեղեկատվություն սպառողների շրջանում սոցիալ-տնտեսական ո՞ր հատվածի (ուլորտի, ենթաուլորտի) վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունն է առավել հետաքրքրական ու գործածական: Հարցի պատասխանների տարբերակներ են ընտրվել պաշտոնական վիճակագրության հետևյալ ոլորտները.


- ազգային հաշիվներ (ՀՆԱ),
- գների վիճակագրություն,
- պետական ֆինանսների վիճակագրություն,
- դրամական և ֆինանսական վիճակագրություն,
- բիզնես վիճակագրություն (արդյունաբերություն, շինարարություն, տրանսպորտ և կապ, առևտուր և ծառայություններ)
- զբաղվածության վիճակագրություն,
- արտաքին առևտրի վիճակագրություն,
- ժողովրդագրություն,
- սոցիալական վիճակագրություն (աղքատություն, առողջապահություն, կրթություն և այլն),
- շրջակա միջավայր,
- գյուղատնտեսություն,
- այլ:

Հարցման մասնակիցների բաշխվածությունն ըստ վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերի և պաշտոնական վիճակագրության ուղղությունների, ներկայացված են ստորև՝ գծապատկերներ 2-ից 11-ում.


Գծապատկեր 2




Գծապատկեր 3




Գծապատկեր 4




Գծապատկեր 5




Գծապատկեր 6




Գծապատկեր 7




Գծապատկեր 8




Գծապատկեր 9



Գծապատկեր 10



Գծապատկեր 11



Հետազոտության արդյունքների ամփոփումից ակնհայտ է, որ պաշտոնական վիճակագրության սպառողների մեջ գերակշիռ մաս են կազմում **պետական կառավարման ոլորտի** ներկայացուցիչները և հանդես են գալիս որպես վիճակագրության յուրաքանչյուր ոլորտի հիմնական սպառող: Այսպես՝ ընդամենը վիճակագրության սպառողների մեջ (տես՝ աղյուսակ 2ա, էջ 49).

- ազգային հաշիվներ (ՀՆԱ)՝ 41.7%,
- գների վիճակագրություն՝ 30.7%,
- պետական ֆինանսների վիճակագրություն՝ 47.1%,
- դրամական և ֆինանսական վիճակագրություն՝ 29.0%,
- բիզնես վիճակագրություն՝ 39.5%,
- զբաղվածության վիճակագրություն՝ 34.0%,
- արտաքին առևտրի վիճակագրություն՝ 31.0%,
- ժողովրդագրություն՝ 33.0%,
- սոցիալական վիճակագրություն՝ 27.2%,
- շրջակա միջավայր՝ 35.1%,
- գյուղատնտեսություն՝ 49.0%,
- այլ՝ 49.0%:

Հարկ է նշել, որ **ազգային հաշիվների (ՀՆԱ)** ցուցանիշներով հետաքրքրվողների մեջ մեծ լսարան են կազմել նաև գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչները (22.2%): Միաժամանակ, հետազոտական կազմակերպությունների ներկայացուցիչների մոտ արձանագրվել է ցուցանիշի ցածր տոկոս (2.8%), իսկ արհմիություններին՝ ընդհանրապես չի հետաքրքրում այլ ոլորտը:

Գների վիճակագրության տեղեկատվությունն ավելի շատ կիրառելի են նաև գործարար համայնքի ներկայացուցիչների շրջանում (15.7%), իսկ ցածր տոկոսներ գրանցվել են արհմիությունների ներկայացուցիչների մոտ (0.8%):

Պետական ֆինանսների վիճակագրություն ավելի շատ օգտագործում են նաև գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչները (16.2%), քիչ են օգտվում արհմիությունների ներկայացուցիչները (1.5%), չեն օգտվում՝ հետազոտական հաստատությունները:

Դրամական և ֆինանսական վիճակագրությունն առավել մեծ չափով կիրառելի են նաև ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցիչների մոտ (24.6%), սակայն ցածր ցուցանիշներով առանձնանում են հետազոտական հաստատությունների ներկայացուցիչները (1.4%):

Բիզնես վիճակագրությունը հետաքրքրում է նաև գործարար համայնքին՝ 18.4%, իսկ ամենաքիչն արձանագրվել է արհմիությունների ներկայացուցիչների շրջանում (0.7%):

Զբաղվածության վիճակագրության ոլորտով ավելի շատ հետաքրքրվում է նաև քաղաքացիական հանրությունը (18.9%), իսկ ամենացածր ցուցանիշն արձանագրվել է ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցիչների մոտ (0.9%):

Արտաքին առևտրի վիճակագրությունը կիրառելի է նաև գիտակրթական ներկայացուցիչների շրջանում՝ 23.8% և նվազ կիրառելի՝ քաղաքացիական հանրության շրջանում (4.8%), չի հետաքրքրում՝ արհմիություններին, հետազոտական հաստատություններին և «այլ» սպառողներին:

Ժողովրդագրական վիճակագրությամբ զբաղվում են նաև քաղաքացիական հանրության ներկայացուցիչները (19.1%), նվազ՝ արհմիությունները (1.7%):

Սոցիալական վիճակագրությունը հետաքրքրում է նաև քաղաքացիական հանրությանը (22.4%), գիտակրթական հաստատություններին՝ 18.4%, իսկ ֆինանսական կազմակերպություններին ընդամենը՝ 1.6%:

Շրջակա միջավայրի վերաբերյալ վիճակագրությամբ հետաքրքրված են նաև քաղաքացիական հանրությունը՝ 15.8%, լրատվամիջոցների և գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչները՝ 14.0-ական տոկոս:

Գյուղատնտեսության վիճակագրությունը կիրառելի է նաև գործարար համայնքի ներկայացուցիչների մոտ՝ 12.2% և քաղաքացիական հանրության շրջանում՝ 10.2%, իսկ արհմիությունների ներկայացուցիչների մոտ այն կազմել է ընդամենը՝ 1.0%-ը:

Այլ վիճակագրությամբ ամենաշատը հետաքրքրված են նաև «այլ» սպառողները (20.3%), իսկ ամենափոքր ցուցանիշն արձանագրվել է երկու խմբի ներկայացուցիչների մոտ (ֆինանսական և միջազգային կազմակերպություններ), համապատասխանաբար՝ 4.1-ական տոկոս:


Հարց 3.

Ի՞նչ եղանակով եք ստանում վիճակագրական տեղեկատվությունը.

Վիճակագրական տեղեկատվության ստացման եղանակները հարցաթերթում 6-ն են (փոստ, էլեկտրոնային փոստ, հեռախոս, ինտերնետ, Ծառայության գրադարան և հանդիպումներ ու մամուլի ասուլիսներ): Սպառողները հարցին պատասխանելիս հիմնականում նշել են տեղեկատվության ստացման մի քանի աղբյուր: Ամփոփման արդյունքները վկայում են, որ վիճակագրական տեղեկատվություն սպառողները ներքոհիշյալ աղբյուրներից ստանում են հետևյալ բաշխվածությամբ (տե՛ս աղյուսակ 3, էջ 50).

Գծապատկեր 12

Տեղեկատվության տարածման եղանակների տոկոսային բաշխումը




Հաշվարկները ցույց են տալիս, որ բոլոր ոլորտների ներկայացուցիչների գերակշիռ մեծամասնությունը վիճակագրական տեղեկատվությունը ստանում է ինտերնետից օգտվելու միջոցով: Տոկոսային արտահայտությամբ սպառողների խմբերում պատկերը հետևյալն է.


- պետական կառավարման մարմինների՝ 39.2%-ը,
- ֆինանսական կազմակերպությունների՝ 64.0%-ը,
- գործարար համայնքի՝ 55.5%-ը,
- արհմիությունների՝ 42.9%-ը,
- լրատվամիջոցների՝ 41.4%-ը,
- քաղաքացիական հանրության՝ 58.4%-ը,
- հետազոտական հաստատությունների՝ 47.1%-ը,
- գիտակրթական հաստատությունների՝ 58.6%-ը,
- միջազգային կազմակերպությունների՝ 30.3%-ը,
- այլ սպառողների՝ 56.8%-ը:


Ստորև ներկայացվող գծապատկերներում ներկայացվել են վիճակագրական տեղեկատվության ստացման եղանակներն ըստ վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերի.

Գծապատկեր 13




Գծապատկեր 14







Գծապատկեր 16




Գծապատկեր 17




Գծապատկեր 18





Գծապատկեր 19



Գծապատկեր 20





Հանդիպումների և մամուլի ասուլիսների միջոցով տեղեկատվության ստացումը գրեթե բոլոր խմբերում ամենատարածված եղանակներից է, օրինակ՝ գործարար համայնքում 18.5%, արհմիություններում 28.5%, լրատվամիջոցներում 34.6%, քաղաքացիական հանրությունում՝ 22.1%, գիտահետազոտական հաստատություններում 19.0%, «այլ»-ում՝ 24.3%: Հետազոտական հաստատությունների և միջազգային կազմակերպությունների շրջանում վիճակագրական տեղեկատվության ստացման տարածված եղանակ է էլեկտրոնային փոստը, համապատասխանաբար՝ 23.5% և 24.2%:

Հարցվողների նշված խմբերում վիճակագրական տեղեկատվության ստացման համար քիչ է օգտագործվում հեռախոսը, փոստը և ՀՀ ԱՎԾ բաց գրադարանը: Գործարար համայնքի միայն 3.7%-ն է օգտվում հեռախոսի միջոցով տեղեկատվություն ստանալու հնարավորությունից, իսկ 1.9%-ը՝ փոստի: Լրատվամիջոցների դեպքում տոկոսային արտահայ-

տությունը փոստի և հեռախոսի դեպքում հավասարապես կազմել է 3.4%, իսկ քաղաքացիական հանրությունը նույն եղանակներից օգտվում է, համապատասխանաբար՝ 2.6%-ով:

Հարկ է նշել, որ հետազոտական հաստատություններն ընդհանրապես չեն օգտվում փոստի միջոցով վիճակագրական տեղեկատվություն ստանալու հնարավորությունից, իսկ հեռախոսից և ՀՀ ԱՎԾ բաց գրադարանից օգտվում է նրանց 5.9-ական տոկոսը: Գիտակրթական հաստատությունները շատ քիչ են օգտվում փոստով (1.7%) և հեռախոսով (3.5%) տեղեկատվություն ստանալու հնարավորությունից: Միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները քիչ են օգտվում փոստից (9.1%) և ՀՀ ԱՎԾ բաց գրադարանից (3.0%): Ինչ վերաբերում է «այլ» սպառողներին, ապա նրանք շատ քիչ են կիրառում էլեկտրոնային փոստը (2.7%) և չեն օգտվում հեռախոսից:


Հարց 4.

Արդյո՞ք բավարարում է վիճակագրական տեղեկատվության տարածման եղանակը


Այս հարցն ակնկալում էր միայն մեկ պատասխանի տարբերակ՝ «այո» կամ «ոչ»: Հարկ է նշել, որ դրական է պատասխանել լրացնողների 84.8%-ը: Ընդ որում, նրանց 34.1%-ը՝ պետական կառավարման մարմինների և 15.5%-ը՝ քաղաքացիական հանրության ներկայացուցիչներն են (տե՛ս գծապատկեր 23):

Լրացնողների 15.2%-ին չեն բավարարում վիճակագրական տեղեկատվության տարածման եղանակները: Նրանց մեջ դարձյալ գերակշիռ մասը (28.9%) բաժին է ընկել պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներին և 19.0%-ը՝ քաղաքացիական հանրության ներկայացուցիչներին (տե՛ս աղյուսակներ 4-5 և 4-5ա, էջ 52-53):

Գծապատկեր 23




Ստորև ներկայացվող գծապատկերն արտացոլում է վիճակագրական տեղեկատվության սպառողների յուրաքանչյուր խմբի ներկայացուցիչների պատասխանները.



Հարց 5.

Ի՞նչ հաճախականությամբ եք օգտվում վիճակագրական տեղեկատվությունից.

Լրացնողները սույն հարցի երեք տարբերակից պետք է ընտրեին մեկ պատասխան՝ «պարբերաբար», «ոչ պարբերաբար» կամ «իրավիճակային»: Ամփոփման արդյունքներից պարզ է դարձել, որ «պարբերաբար» օգտվողներն ավելի շատ են՝ 57.6%: «Ոչ պարբերաբար» տարբերակը լրացրել է հարցվողների 16.7%-ը: «Իրավիճակային» տարբերակը ընտրել է հարցվողների 25.7%-ը: Ընդ որում, բոլոր տարբերակներում էլ պետական կառավարման մարմինների ներկայացուցիչները հանդես են գալիս առաջին դիրքերում (տե՛ս աղյուսակներ 4-5 և 4-5ա, էջ 52-53):




Հարց 6.

Ի՞նչ նպատակներով եք օգտագործում պաշտոնական վիճակագրությունը.

Հետազոտության այս հարցի ամփոփման արդյունքում պարզվել է, թե հարցվողներն ինչ նպատակով են օգտագործում պաշտոնական վիճակագրությունը (ընթացիկ զարգացումների վերլուծություն կարճաժամկետ որոշումների համար, միտումների վերլուծություն երկարաժամկետ քաղաքականության ձևավորման համար, էկոնոմետրիկ մոդելների կառուցում և կանխատեսումներ, հետազոտական նպատակներ, ընդհանուր տնտեսագիտական տեղեկատվություն, այլ) (տե՛ս աղյուսակ 6, 6ա, էջ 54-55):


Գծապատկեր 26




- (1) ընթացիկ զարգացումների վերլուծություն կարճաժամկետ որոշումների համար
- (2) միտումների վերլուծություն երկարաժամկետ քաղաքականության ձևավորման համար
- (3) էկոնոմետրիկ մոդելների կառուցում և կանխատեսումների համար
- (4) հետազոտական նպատակների համար
- (5) ընդհանուր տնտեսագիտական տեղեկատվություն
- (6) այլ

Վերլուծության ժամանակ շեշտադրումը կատարվել է առավելագույն և նվազագույն հետաքրքրություն և օգտագործելիություն ունեցող ցուցանիշների վրա՝ արտահայտված տոկոսներով (տե՛ս գծապատկերներ 27-ից 37):


Ըստ ամփոփիչ արդյունքների, պաշտոնական վիճակագրությունը պետական կառավարման մարմիններն օգտագործում են առավելապես ընդհանուր տնտեսագիտական տեղեկատվություն ստանալու նպատակով (նրանց 27.5%-ը), իսկ 6.7%-ը (նվազագույնը)՝ էկոնոմետրիկ մոդելների կառուցման և կանխատեսման նպատակով:




Ֆինանսական կազմակերպությունները հիմնականում օգտագործում են ընդհանուր տնտեսագիտական տեղեկատվություն ստանալու նպատակով՝ 28.1%, իսկ նվազագույն օգտագործելիություն ունի էկոնոմետրիկ մոդելների կառուցման և կանխատեսման ոլորտը՝ 6.2%:




Հետաքրքրական է, որ գործարար համայնքը տեղեկատվությունը հավասարապես (31.1%) է օգտագործում և՛ ընթացիկ զարգացումների վերլուծության մեջ կարճաժամկետ որոշումների համար, և՛ ընդհանուր տնտեսագիտական տեղեկատվություն ստանալու նպատակով, իսկ նվազագույնը (5.0%)՝ հավասարապես օգտագործում և՛ երկարաժամկետ քաղաքականության ձևավորման համար միտումների վերլուծության, և՛ էկոնոմետրիկ մոդելների կառուցման և կանխատեսման նպատակներով:




Արհմիությունների կողմից վիճակագրական տեղեկատվության 37.5%-ն օգտագործվում է «այլ», իսկ նվազագույնը՝ ընդհանուր տնտեսագիտական տեղեկատվություն (12.5%) ստանալու նպատակով: Պետք է նշել նաև, որ արհմիությունների կողմից բացարձակապես չեն օգտագործում վիճակագրական տեղեկատվությունն էկոնոմետրիկ մոդելների կառուցման և կանխատեսման և հետազոտական նպատակներով:




Լրատվամիջոցների շրջանում վերլուծության արդյունքները վկայում են, որ վիճակագրական տեղեկատվության 39.1%-ն օգտագործվում է ընդհանուր տնտեսագիտական տեղեկատվություն ստանալու նպատակով, իսկ 4.4%-ը՝ երկարաժամկետ քաղաքականության ձևավորման համար միտումների վերլուծության համար: Հատկանշական է, որ տվյալ խմբում բացարձակապես հետաքրքրված չեն էկոնոմետրիկ մոդելների կառուցման և կանխատեսումների համար:



Հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ քաղաքացիական հանրության շրջանում վիճակագրական տեղեկատվությունն օգտագործվում է ընդհանուր տնտեսագիտական տեղեկատվություն ստանալու համար՝ 35.7%-ը և միայն 4.1%-ն է, որ հետաքրքրված է էկոնոմետրիկ մոդելների կառուցման և կանխատեսումների համար:




Հետազոտական հաստատությունները վիճակագրական տեղեկատվությունն օգտագործում են մեծամասամբ հետազոտական նպատակներով՝ 40.0%, իսկ նվազագույն հետաքրքրությունն «այլ» նպատակներն են: Տվյալ խմբի հարցվողները վիճակագրական տեղեկատվությունն ընդհանրապես չեն օգտագործում երկարաժամկետ քաղաքականության ձևավորման համար միտումների վերլուծության նպատակով:




Հարցման արդյունքները վկայում են, որ գիտակրթական հաստատությունները վիճակագրական տեղեկատվությունն օգտագործում են առավելապես ընդհանուր տնտեսագիտական տեղեկատվություն ստանալու նպատակով՝ 36.8%, իսկ նվազագույնը (4.4%)՝ միտումների վերլուծության երկարաժամկետ քաղաքականության ձևավորման համար:


Գծապատկեր 34



Միջազգային կազմակերպությունները վիճակագրական տեղեկատվությունն օգտագործում են հիմնականում հետազոտական նպատակներով (25.0%) և նվազ ցուցանիշ է արձանագրվել «այլ» նպատակներով օգտագործելիս (2.9%):



Հարցվողների այն մասը, որն ընդգրկված չէր նշված խմբերից և ոչ մեկի մեջ, վիճակագրական տեղեկատվության օգտագործման ոլորտ է նախընտրում «այլ»-ը՝ 41.0% և նվազ հետաքրքրություն ցուցաբերում՝ երկարաժամկետ քաղաքականության ձևավորման համար միտումների վերլուծությունը՝ 2.6%:




Ամփոփելով սույն վերլուծությունը, հարկ է նշել, որ վիճակագրական տեղեկատվությունն առավելագույնս օգտագործվում է ընդհանուր տնտեսագիտական տեղեկատվություն ստանալու նպատակով, իսկ նվազ հետաքրքրություն՝ երկարաժամկետ քաղաքականության ձևավորման համար միտումների վերլուծության և էկոնոմետրիկ մոդելների կառուցման ու կանխատեսման համար օգտագործվող տեղեկատվությունը:

Հարց 7.

Արդյո՞ք առկա պաշտոնական վիճակագրությունը բավարարում է Ձեր նախապատվային կարիքները.

Հետազոտության այս հարցն ուներ պատասխանի ընտրության հինգ տարբերակ (ամբողջովին, հիմնականում, մասամբ ոչ, մասամբ այո, չի բավարարում): Հարցման արդյունքների վերլուծությունից պարզ է դարձել, որ պաշտոնական վիճակագրությունը «հիմնականում» է բավարարում հարցվողների 49.4%-ի նախապատվային կարիքները, իսկ այն հատվածը, որին ընդհանրապես «չի բավարարում»՝ կազմել է 2.6%:

Գծապատկեր 37



Հարկ է նշել, որ հետազոտական հաստատությունների (45.4%) և ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցիչների (21.1%) խմբերում գերակշիռ մեծամասնությունը նշել է, որ պաշտոնական վիճակագրությունն «ամբողջովին» է բավարարում նրանց կարիքները:

Հատկանշական է, որ պետական կառավարման մարմինների 53.5%-ը, ֆինանսական կազմակերպությունների 47.3%-ը, գործարար համայնքի 34.2%-ը, արհմիությունների 60.0%-ը, լրատվամիջոցների 53.3%-ը, քաղաքացիական հանրության 49.1%-ը, հետազոտական կազմակերպությունների 18.2%-ը, գիտակրթական հաստատությունների 45.5%-ը, միջազգային կազմակերպությունների 80.0%-ը և հարցվողների «այլ» խմբի 58.1%-ը գտել են, որ վիճակագրական տեղեկատվությունը «հիմնականում» է բավարարում նրանց պահանջները:

Ուշագրավ է, որ վիճակագրության տեղեկատվությունը «չի բավարարում» գիտակրթական հաստատությունների 4.5%-ին, որն էլ հանդիսանում է եղած բոլոր խմբերի միակ «մեծ» տոկոսը:

Ֆինանսական կազմակերպությունների, արհմիությունների, լրատվամիջոցների, հետազոտական հաստատությունների և միջազգային կազմակերպությունների շրջանում արված հարցումների արդյունքում ընդհանրապես չի գրանցվել «չի բավարարում» պատասխանը (տե՛ս աղյուսակ 7, 7ա, էջ 56-57):


Հարց 8.

Արդյո՞ք ծանոթ եք պաշտոնական վիճակագրության մեթոդաբանությանը.

Հետազոտության այս հարցը նույնպես ակնկալում էր պատասխանի 5 տարբերակ՝ ամբողջովին, հիմնականում, մասամբ ոչ, մասամբ այո, չի բավարարում: Հարցման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ սպառողների 38.9%-ը նշել է «հիմնականում» պատասխանը, իսկ 2.9%-ը՝ «ամբողջովին» և «ոչ» պատասխանել է 7.7%-ը: Ընդ որում, պետական կառավարման մարմինների (45.6%), ֆինանսական կազմակերպությունների (47.4%), գործարար համայնքի (36.8%), արհմիությունների (60.0%), լրատվամիջոցների (33.3%), քաղաքացիական հանրության (38.2%), գիտակրթական հաստատությունների (50.0%), միջազգային կազմակերպությունների (70.0%) և հարցվողների «այլ» (32.3%) խմբերի ներկայացուցիչները փաստում են, որ վիճակագրական մեթոդաբանությանը «ամբողջովին» և «հիմնականում» ծանոթ են: Հարկ է նշել, որ «ոչ» պատասխանների մեջ ամենամեծ տեսակարար կշիռը (20.0%) գրանցվել է արհմիությունների ներկայացուցիչների մոտ (տե՛ս աղյուսակ 8-9, 8-9ա, էջ 58-59):

Ստորև ներկայացվում է սույն հարցի պատասխանների գծապատկերումը.

Գծապատկեր 38




Հարց 9.

Արդյոք տեղյա՞կ եք, որ առկա է հանրայնորեն տարածվող վիճակագրական հրապարակումների օրացույց, համաձայն որի կանխավ հայտարարվում են հրապարակման ժամկետները.

Վիճակագրական տեղեկատվության սպառողների տեղեկացվածության չափը ներկայացվում է ստորև.


Գծապատկեր 39



Ընդ որում, առավելապես տեղյակ են պետական կառավարման մարմինների ներկայացուցիչները՝ 35.3% և ամենաքիչը՝ արհմիությունների ներկայացուցիչները՝ 1.5% (տե՛ս աղյուսակ 8-9, 8-9ա, էջ 58-59):

Ստորև ներկայացվում է հարցի պատասխանների գծապատկերն ըստ յուրաքանչյուր խմբի.

Գծապատկեր 40




Ուսումնասիրելով առանձին խմբերի պատասխաններն ակնհայտ է, որ դրանց մեջ ամենախրազելը միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներն են (80.0%):

Հարց 10.

Ելնելով Ձեր փորձառությունից, արդյո՞ք պաշտոնական վիճակագրությունը հրապարակվում է հայտարարված ժամկետներում.

Այս հարցին վիճակագրական տեղեկատվություն սպառողներից դրական են պատասխանել 89.2%-ը և բացասական՝ 10.8%-ը: Ընդ որում, ֆինանսական կազմակերպությունների և արհմիությունների ներկայացուցիչները արձանագրել են, որ ՀՀ ԱՎԾ-ն 100%-ով է պահպանում հրապարակման հայտարարված ժամկետները, 90.0%-ից բարձր՝ գործարար համայնքի, քաղաքացիական հանրության, հետազոտական հաստատությունների, միջազգային կազմակերպությունների և «այլ» սպառողների ներկայացուցիչները, իսկ լրատվամիջոցների ներկայացուցիչների 1/3-ը համարում է, որ ՀՀ ԱՎԾ-ն հայտարարված ժամկետները չի պահպանում (տե՛ս աղյուսակ 10-11, 10-11ա, էջ 60-61):

Գծապատկեր 41




Հարց 11.

Տեղյա՞կ եք վիճակագրական ցուցանիշների վերանայումների քաղաքականությանը.

Այս հարցի պատասխանի տարբերակը նույնպես մեկն էր՝ «այո» կամ «ոչ»: Հետաքրքիր է, որ դրական է պատասխանել լրացնողների միայն 36.8%-ը: Ընդ որում, «այո»-ների մեջ ամենաբարձր տոկոսը (39.7%) գրանցվել է պետական կառավարման մարմինների ներկայացուցիչների և ամենացածրը (0.7%)՝ արհմիությունների ներկայացուցիչների շրջանում: «Ոչ» պատասխանողների մեջ մեծ տոկոսը նույնպես վերաբերում է պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներին՝ 29.6% և փոքր ինչ նվազ (18.5%)՝ քաղաքացիական հանրության խմբին (տե՛ս աղյուսակ 10-11, 10-11ա, էջ 60-61):

Խնդրո առարկա հարցի պատասխաններն ըստ յուրաքանչյուր խմբի, ներկայացվում է ստորև ներկայացվող գծապատկերում.




Հարց 12.

Ինչպե՞ս եք գնահատում պաշտոնական վիճակագրության որակը.

Հետազոտության այս հարցն ուներ պատասխանի ընտրության 6 տարբերակ (շատ բարձր, բարձր, միջին, ցածր, շատ ցածր, կարծիք չկա): Հարցման արդյունքների վերլուծությունից պարզ է դարձել, որ պաշտոնական վիճակագրության որակը «շատ բարձր» ու «բարձր»՝ 46.2%-ը և «շատ ցածր»՝ 0.3%-ը (տե՛ս աղյուսակ 12, 12ա, էջ 62-63):


Պաշտոնական վիճակագրության որակի գնահատումը, %




Հատկանշական է, որ պետական կառավարման մարմինների 43.9%-ը, ֆինանսական կազմակերպությունների 47.4%-ը, գործարար համայնքի 44.7%-ը, արհմիությունների 60.0%-ը, քաղաքացիական հանրության 49.1%-ը, գիտակրթական հաստատությունների 45.5%-ը, լրատվամիջոցների 40.0%-ը, քաղաքացիական հանրության 49.1%-ը, հետազոտական հաստատությունների 36.4%-ը, գիտակրթական հաստատությունների 40.9%-ը, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների 70.0%-ը և «այլ» սպառողների 54.9%-ը պաշտոնական վիճակագրության որակը գնահատում է «շատ բարձր» և «բարձր»:

«Ցածր» և «շատ ցածր» են գնահատում, համապատասխանաբար՝ պետական կառավարման մարմինների 4.4%-ը, գործարար համայնքի 8.0%-ը, լրատվամիջոցների 20.0%-ը, քաղաքացիական հանրության 3.6%-ը և «այլ» սպառողների 3.2%-ը: Ստորև ներկայացվում են բոլոր խմբերի մոտեցումներն առանձին-առանձին.


Գծապատկեր 44




Գծապատկեր 45




Գծապատկեր 46




Գծապատկեր 47




Գծապատկեր 48




Գծապատկեր 49





Գծապատկեր 50



Գծապատկեր 51





Հարց 13. Լրացուցիչ մեկնաբանություններ (ներառյալ այն ոլորտների մասին, որոնք Ձեր կարծիքով բարելավման կարիք ունեն).

Ստորև ներկայացվում են լրացված հարցաթերթերից վերցված վիճակագրական սպառողների մեկնաբանություններ, որոնք ենթակա են որոշակի ուսումնասիրման և գնահատման.

- ✓ վիճակագրական տվյալների և վերլուծությունների հնարավոր ճշգրիտ արդյունքների հրապարակում (օրինակ՝ գնաճի տեմպերի առավել իրատեսական ցուցանիշների և դրանց հաշվարկման համար հիմք ընդունված տարրերի ճիշտ ընտրություն),
- ✓ սոցիալ-տնտեսական վիճակագրության բոլոր ոլորտների բարելավում, հստակեցում, շտկում,
- ✓ պետական կարիքներից բխող պարտավորությունների (և՛ ներքին, և՛ արտաքին) համար անհրաժեշտ վիճակագրական նյութերի պատրաստում (կլիմայի փոփոխության հիմնա-

- խնդրի մասով դա «ներքնից վերև» գույքագրումն է (ջերմային գազերի կադաստրի և այլ նպատակների համար),
- ✓ առողջապահության ոլորտի վիճակագրության մեջ արտաքին միջավայրի աղտոտվածության և արտաքին միջավայրի աղտոտվածության հետ կապված հիվանդությունների վերաբերյալ տվյալների առանձնացում,
 - ✓ ըստ մարզերի բնակչության սեռատարիքային բաշխման մասին անհրաժեշտ տեղեկատվության ներառում,
 - ✓ բիզնես ռեգիստրի բազայի «ոչ զգայուն» տեղեկատվությունից այլ հետազոտողների օգտվելու հնարավորություն (այդ հնարավորության օրենքով սահմանում՝ ներառյալ ծախսերի հատուցման կարգը),
 - ✓ ՀՀ ԱՎԾ կողմից վիճակագրական գրագիտության գործնական անփոփոխ ծրագրի իրականացում,
 - ✓ թափանցիկության ապահովում բոլոր ոլորտներում (օրինակ՝ քրեակատարողական համակարգի բյուջեն),
 - ✓ տվյալների բանկում ավելի ընդարձակ տեղեկատվության և ավելի երկար ժամանակագրական շարքերի ներառում,
 - ✓ բոլոր տվյալների Excel ձևաչափով հրապարակում (ներառյալ նախորդ ժամանակահատվածների տվյալները), օրինակ՝ դինամիկ տվյալների տնտեսական ակտիվության ինդեքսը, աշխատանքի շուկայի, անշարժ գույքի գների տվյալները,
 - ✓ մարզային կտրվածքով ավելի շատ տեղեկատվություն,
 - ✓ եռամսյակային կտրվածքով գյուղատնտեսական ոլորտի ցուցանիշների ներկայացում,
 - ✓ մարզային կտրվածքով ՀՆԱ-ի ներկայացում,
 - ✓ եռամսյակային կտրվածքով զբաղվածության, տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի ըստ մարզերի ներկայացում,
 - ✓ ժողովրդագրության, միգրացիայի վերաբերյալ մարզային կտրվածքով վիճակագրության ընդլայնում,
 - ✓ եռամսյակային կտրվածքով էլեկտրաէներգիայի և ջերմային էներգիայի ծավալների, գյուղատնտեսության համախառն արտադրանքի, զբաղվածության ցուցանիշների ներկայացում,
 - ✓ ներբեռնվող DOC ֆայլերի ոչ միայն թվերի տեսքով, այլև դրանցում առկա տեղեկատվության մասին հուշումների ներկայացում,
 - ✓ վերադարձ ՀՆԱ-ի մասին տեղեկատվության տարածման նախկին եղանակին՝ անկախ տնտեսական ակտիվության ցուցանիշի,
 - ✓ անհրաժեշտ է տեխնիկապես բարելավել արտաքին առևտրի վիճակագրությունից օգտվելու հնարավորությունները, մասնավորապես, հաշվարկներ իրականացնելիս կարիք է զգացվում արտաքին առևտրի ապրանք-երկիր ամսական բացվածքի անհրաժեշտության, ինչպես նաև 4-նիշ դասակարգմամբ արտաքին առևտրի թվերի ՀՀ ԱՎԾ կայքից ներբեռնումը տեխնիկապես գրեթե անհնար է:
 - ✓ գյուղատնտեսության վիճակագրությունն էական բարելավման կարիք ունի, աշխատանքի շուկայի վիճակագրությունն ընդհատվող է, որը խնդիրներ է առաջացնում մոդելներ կազմելիս:
 - ✓ ԱՀՀ-ի հիմնական հաշիվները (տարածքային համախառն ավելացված արժեք, տնային տնտեսությունների սպառում և այլն) մարզային կտրվածքով դեռևս չեն հաշվարկվում,
 - ✓ ՀՀ գյուղական համայնքների վերաբերյալ տեղեկատվության ընդլայնում,
 - ✓ պետական վիճակագրական հաշվետվական ձևերի կրճատում, բարելավում,

- ✓ վիճակագրական տեղեկատվության իրականությանն ավելի համապատասխանություն,
- ✓ վիճակագրական հրապարակումների թղթային տարբերակների հասանելիություն,
- ✓ սոցիալական ոլորտին վերաբերող վիճակագրության, մասնավորապես, աղքատությանը վերաբերող ցուցանիշների ավելի հաճախակի հրապարակում,
- ✓ յուրաքանչյուր քաղաքի բնակչության սեռատարիքային կազմի վերաբերյալ տեղեկագրերի տեսքով տարեկան պարբերականությամբ հրապարակումներ,
- ✓ բնակչության մեխանիկական շարժի ցուցանիշների պարբերաբար հրապարակում,
- ✓ հեռուստատեսությամբ թողարկումների և հանդիպումների հաճախակի անցկացում,
- ✓ հարցաթերթի 10-րդ հարցի պատասխաններում «այդքան էլ տեղյակ չեմ» տարբերակի հնարավորություն:



ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Վիճակագրական տեղեկատվության սպառողը դեռևս բավարար չափով չի օգտագործում մատուցվող վիճակագրական տեղեկատվությունը, քանզի հիմնականում ոչ լիարժեք է վիճակագրական ցուցանիշների և դրանց հաշվարկման մեթոդաբանության մասին իրազեկվածությունը: Վերջինս հնարավոր է խորացնել «վիճակագիր-սպառող» փոխհարաբերությունն առավելագույնս ընդլայնելու միջոցով (հանդիպումների, մամուլի ասուլիսների, հրապարակումներում մեթոդաբանական պարզաբանումների մշտական գետեղումով և այլն):

Կարևոր փուլ է գրադարանի ավտոմատացումը, հատուկ ծրագրերի ներդրումը, որոնց միջոցով հնարավոր է ավտոմատ կերպով օգտվել համացանցի տեղեկատվությունից և ստանալ այն ցանկացած տեսքով: Օգտագործողը հնարավորություն կունենա տեղում ինքնուրույն աշխատել վիճակագրական տվյալների բազաների հետ:

Վիճակագրական տեղեկատվության մեջ երբեմն անհրաժեշտ է տվյալների ավելի մանրամասն ընդգրկում կամ պարբերականության ավելի հաճախականացում:

Վիճակագրական արտադրանքի կազմի նորացումը և տվյալների որակի հետագա կատարելագործումը կընդլայնի սպառողների շրջանակը:

Միաժամանակ, հարկ է նշել, որ վիճակագրական տեղեկատվության և արտադրանքի իրացման գործում առկա են ֆինանսական, տեխնիկական և տեխնոլոգիական դժվարություններ, սահմանափակումներ, որոնք լրջագույն արգելքներ են հրապարակային գործունեության հետագա կատարելագործման ճանապարհին:

Առկա են նաև այլ կարևոր հիմնախնդիրներ, որոնց լուծմամբ կբարելավվի պաշտոնական վիճակագրությունը: Դրանք են. ազգային հաշիվների համակարգի բարելավումը, գյուղատնտեսական համատարած հաշվառումը, չհաշվառվող տնտեսության գնահատման մեթոդաբանության կատարելագործումը, բնապահպանության ոլորտի վիճակագրության բարելավումը, ինչպես նաև ամբողջականացումը, արդիականացումը, վարչական նոր ռե-

գիտությունների ստեղծումը և գործողների կատարելագործումը, ֆինանսական վիճակագրությունում ֆինանսական հաշվի վիճակագրական տվյալների համապատասխանության ապահովումը, վիճակագրական տեղեկատվության մատչելիության, թափանցիկության մակարդակի էլ ավելի բարձրացումը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության նյութերով կուտակված տեղեկատվությունը ծավալուն է, արդյունքում բազմաթիվ փոխադարձ դրական ազդակներ են հաղորդվել, հետաքրքիր առաջարկություններ և հարցեր առաջադրվել: Եվ վիճակագրական տեղեկատվություն սպառողների հետ այս եղանակով համագործակցության արդյունքում կուտակված նյութերն անպայմանորեն արձագանք կգտնեն և կարտացոլվեն ՀՀ ԱՎԾ հետագա գործունեության մեջ:

Սպառողների շրջանում անցկացված այս հետազոտությունը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ հնարավորություն է ընձեռվել ևս մեկ անգամ հաշվի առնել յուրաքանչյուր սպառողի կարծիքը և գնահատել վիճակագրական հրապարակումների կատարելագործման գործընթացը:

Հետագա հրապարակումներում խնդիր է դրվել խուսափել տեքստային հոգնեցուցիչ հատվածներից և փոխարենը կիրառել քարտեզներ, Գծապատկերներ, դիագրամներ:

Բացի վերը նշվածից, մեծ աշխատանքներ պետք է տարվեն հրապարակումներում միջազգային համադրումների վերաբերյալ հատվածներ զետեղելու ուղղությամբ:

Բոլոր հրապարակումներում ցանկալի է զետեղել հնարավորինս շատ տվյալների հավաքագրման, մշակման մեթոդաբանություն, ինչը զգալիորեն կհեշտացնի տվյալների օգտագործումը:

Կարևորվում է վիճակագրական տեղեկատվության սպառողի համար վիճակագրական տվյալների հիմնապաշարներից օգտվելու առավել հարմար եղանակների (ծրագրային փաթեթներ) ներդրումը: Կարևոր են նաև ծրագրային ապահովումների ճիշտ ընտրությունները, մատչելի ծրագրային միջոցների ապահովումը, մշտադիտարկումը, մշտական կատարելագործումը, ամփոփումները:

Վիճակագրական հրապարակումների բովանդակության կատարելագործման նպատակով պետք է մշտապես զարգանա սպառողների հետ հետադարձ կապը, որի շնորհիվ հետազայում կբավարարվի հենց նույն սպառողների պահանջարկը:

Ինչ վերաբերում է պաշտոնական վիճակագրության հանդեպ վստահությանը, տարածման քաղաքականությանը և փորձին, ապա հարկ է նշել, որ պետական վիճակագրության հանդեպ վստահությունը պետք է կենսական կարևոր նշանակություն ունենա գործառույթներ իրականացնող մարմինների համար: Նրանց կողմից վստահությունն ամրապնդելու համար անհրաժեշտ է բարելավել վիճակագրական ենթակառուցվածքները և հաղորդակցման հնարավորությունները: Զարգացնել և օժանդակել արդյունավետ փոխհարաբերությունն այն սպառողների հետ, որոնք կարծիք են ձևավորում:



ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վիճակագրության ոլորտի հիմնական նպատակն է ՀՀ սոցիալ-տնտեսական գործընթացների, բնակչության և նրա կենսագործունեության ոլորտների վերաբերյալ տվյալների հավաքագրումը, մշակումը, կուտակումը, ամփոփումը, պահպանումը, ինչպես նաև փոխանակումը և վիճակագրական տեղեկատվության տարածումը:

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ի դրույթների, ՀՀ ԱՎԾ-ն պետական վիճակագրության իրագործման բնագավառում իր գործունեությունն իրականացնում է, հիմք ընդունելով ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատվող պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրերով սահմանված հիմնական ուղղությունները, և այդ ուղղությունների առարկայական իրագործման ենթատեքստով՝ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատվող պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով սահմանված միջոցառումները:

Անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ ԱՎԾ-ն շարունակի վիճակագրության միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանման համատեքստում վիճակագրության ինստիտուցիոնալ վերափոխման գործընթացները՝ վիճակագրական մեթոդաբանության շարունակական կատարելագործման, միջազգային չափանիշների հետ դրա ներդաշնակեցման ու միասնականացման միջոցով, վարչական ռեգիստրների միջոցով տեղեկատվության հավաքագրման մեխանիզմի ամբողջական կիրարկում, տարածքային (համայնքների, խոշոր քաղաքների) վիճակագրության համակարգի ձևավորման օժանդակություն և կատարելագործում, վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկի առավել ամբողջական և օպերատիվ բավարարում, գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացում:

XXI դարը պահանջում է վիճակագրական տեղեկատվության համակարգի առաջանցիկ զարգացում մյուս ոլորտների համեմատ, անորոշության դաշտի նվազեցում, ինչը, բնականաբար, մեծացնում է վիճակագրական տեղեկատվության նշանակությունը:

Վիճակագրական տեղեկատվությունը, ինչպես ցանկացած ապրանք, պետք է համապատասխանի քանական և որակական չափանիշների ամբողջական շարքի պահանջներին (բովանդակությունից մինչև տարածումը): Տեղեկատվության ավելի արագ տարածումը կարող է հասանելի լինել միայն ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ:

Վիճակագրության վերակառուցման առաջնահերթ ուղղություններից մեկը վիճակագրական տեղեկատվության տարածման փորձի և դրա վարման քաղաքականության նորացումն է ու այդ բնագավառում նոր մոտեցումների կիրառումը:

Միայն նման հետազոտությունների պարբերական անցկացումը հնարավորություն կընձեռի ժամանակի և տարածության մեջ մշտապես դիտարկել վիճակագրական տեղեկատվություն սպառողի աճող և փոփոխվող պահանջմունքները, ուսումնասիրել և հնարավորինս բավարարել դրանք:

Օգտակար է այն վիճակագրությունը, որից օգտվում են: Վիճակագրական տվյալները արխիվի համար չեն պատրաստվում: Եթե վիճակագրությունը չի հանդիսանում որոշումների ընդունման գործիք և չի օգնում հասկանալ տեղի ունեցող երևույթները, այն չի կատարում իր հիմնական գործունեությունը:

Եթե վիճակագիրը չի ճանաչում իր սպառողներին, ապա նա չի հասկանա, թե բավարարված են արդյոք նրանք մատուցված ծառայություններից, չի իմանա վիճակագրությունում առկա որևէ անբավարար ծառայության մասին և դժվար կլինի զարգացնել այն ուղղությունը, որը կհամապատասխանի նրանց տեղեկատվական պահանջմունքին:

Վիճակագրական տեղեկատվության որակը կախված է տեղեկատվություն տրամադրողների անկեղծությունից և հետազոտվող հարցվողների ճշգրիտ պատասխաններից:

Հարկ է անընդհատ հիշել, որ վիճակագրական տեղեկատվություն սպառողների տարբեր խմբերն ունեն տարբեր պահանջմունքներ և միատեսակ ծառայությունների մատուցումը բոլոր տեսակյուններից թերի ու անբավարար կլինի: Այսպես օրինակ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները մեր գործընկերներն են և նրանց անհրաժեշտ է օգնել լինելու լիարժեք տեղեկացված և տրամադրել հակիրճ տեղեկատվություն:

Գործարար աշխարհի ներկայացուցիչների խումբն առավել լայն նպատակային խումբ է և նրանց հետ շփումը բարդ է, բայց օգտակար: Նրանց անհրաժեշտ է քիչ ավելի մանրամասնեցված տեղեկատվություն:

Վիճակագրական ծառայությունները կարիք ունեն գերակտիվ հաղորդակցման և արհեստավարժ դեկավարվող համակարգված մոտեցման նրանց տեղեկատվական ծառայությունների զարգացման գործում: Տեղեկատվական ծառայությունները տվյալների հավաքագրման և վիճակագրական տեղեկատվության արտադրության հետ մեկտեղ հանդիսանում են ցանկացած վիճակագրական ծառայության հիմնական գործունեություններից մեկը:



Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ *

1. Վիճակագրական տեղեկատվության սպառողների ո՞ր խմբին եք պատկանում.

- *պետական կառավարման մարմիններ*
- *ֆինանսական կազմակերպություններ*
- *գործարար համայնք*
- *արհմիություններ*
- *լրատվամիջոցներ*
- *քաղաքացիական հանրություն (հասարակական կազմակերպություններ, անհատներ)*
- *հետազոտական հաստատություններ*
- *գիտակրթական հաստատություններ*
- *միջազգային կազմակերպություններ*
- *այլ*

2. Ինչպիսի՞ օպաշտոնական վիճակագրություն եք Դուք օգտագործում.

- *ազգային հաշիվներ (ՀՆԱ)*
- *գների վիճակագրություն*
- *պետական ֆինանսների վիճակագրություն*
- *դրամական և ֆինանսական վիճակագրություն*
- *բիզնես վիճակագրություն (արդյունաբերություն, շինարարություն, տրանսպորտ և կապ, առևտուր և ծառայություններ)*

* Պատասխանները խնդրում ենք արտացոլել վանդակներում՝ նշումների տեսքով:

- գրադավածության վիճակագրություն
- արտաքին առևտրի վիճակագրություն
- ժողովրդագրություն
- սոցիալական վիճակագրություն
(աղքատություն, առողջապահություն, կրթություն և այլ)
- շրջակա միջավայր
- գյուղատնտեսություն
- այլ:

3. Ի՞նչ եղանակով եք ստանում վիճակագրական տեղեկատվությունը.

- փոստով
- էլեկտրոնային փոստով
- հեռախոսով
- Ինտերնետով
- Ծառայության գրադարանից
- հանդիպումներից, մամուլի ասուլիսներից

4. Արդյո՞ք բավարարում է վիճակագրական տեղեկատվության տարածման եղանակը.

- այո
- ոչ

5. Ի՞նչ հաճախականությամբ եք օգտվում վիճակագրական տեղեկատվությունից.

- պարբերաբար
- ոչ պարբերաբար
- իրավիճակային

6. Ի՞նչ նպատակներով եք օգտագործում պաշտոնական վիճակագրությունը

- ընթացիկ զարգացումների վերլուծություն կարճաժամկետ որոշումների համար
- միտումների վերլուծություն երկարաժամկետ քաղաքականության ձևավորման համար
- էկոնոմետրիկ մոդելների կառուցում և կանխատեսումներ
- հետազոտական նպատակներ
- ընդհանուր տնտեսագիտական տեղեկատվություն
- այլ

7. Արդյո՞ք առկա պաշտոնական վիճակագրությունը բավարարում է Ձեր նախապատվային կարիքները.

- ամբողջովին
- հիմնականում
- մասամբ ոչ
- մասամբ այո
- չի բավարարում

8. Արդյո՞ք ծանոթ եք պաշտոնական վիճակագրության մեթոդաբանությանը.

- ամբողջովին
- հիմնականում
- մասամբ ոչ
- մասամբ այո
- ոչ

9. Արդյո՞ք տեղյակ եք, որ առկա է հանրայնորեն տարածվող վիճակագրական հրապարակումների օրացույց, համաձայն որի կանխավ հայտարարվում են հրապարակման ժամկետները.

- այո
- Ոչ

10. Ելնելով Ձեր փորձառությունից, արդյո՞ք պաշտոնական վիճակագրությունը հրապարակվում է հայտարարված ժամկետներում.

➤ այո

➤ ոչ

11. Տեղյա՞կ եք վիճակագրական ցուցանիշների վերանայումների քաղաքականությանը.

➤ այո

➤ ոչ

12. Ինչպե՞ս եք գնահատում պաշտոնական վիճակագրության որակը.

➤ շատ բարձր

➤ բարձր

➤ միջին

➤ ցածր

➤ շատ ցածր

➤ կարծիք չկա

13. *Լրացուցիչ մեկնաբանություններ (ներառյալ այն ոլորտների մասին, որոնք Ձեր կարծիքով բարելավման կարիք ունեն).*

Շնորհակալություն համագործակցության համար

Լրացված հարցաթերթը ինդրում ենք ուղարկել ստորև ներկայացվող հասցեով՝
ՀՀ, ք. Երևան, 0010, Հանրապետության պող., Կառավարական տուն 3, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին (709 սենյակ)

☎ 52-33-56, 52-45-42

Էլեկտրոնային փոստ՝ svod@armstat.am , info@armstat.am

Ֆաքս՝ (374 10) 52-19-21

<http://www.armstat.am> (հայելային կայքէջ՝ <http://www.armstat.info>)

«Վիճակագրական տեղեկատվության սպառողների»
 հարցաթերթի պատասխանների արդյունքներն աղյուսակային ներկայացմամբ

Աղյուսակ 1

%-ով ընդամենի նկատմամբ

N/N	Վիճակագրական տեղեկատվություն սպառողների խմբերը	Հարց 1. Վիճակագրական տեղեկատվության սպառողների ո՞ր խմբին եք պատկանում
	ԸՆԴԱՄԵՆԸ	100
1	Պետական կառավարման մարմիններ	33.3
2	Ֆինանսական կազմակերպություններ	5.6
3	Գործարար համայնք	11.1
4	Արհմիություններ	1.5
5	Լրատվամիջոցներ	4.4
6	Քաղաքացիական հանրություն (հասարակական կազմակերպություններ, անհատներ)	16.0
7	Հետազոտական հաստատություններ	3.2
8.	Գիտակրթական հաստատություններ	12.9
9.	Միջազգային կազմակերպություններ	3.0
10.	Այլ	9.0

Հարց 2. Ինչպիսի՞ պաշտոնական վիճակագրություն եք Դուք օգտագործում.

%-ով ընդամենի նկատմամբ

N/N	Վիճակագրական տեղեկատվություն սպառողների խմբերը	Ընդամենը	Ազգային հաշիվներ (ՀՆԱ)	Գների վիճակագրություն	Պետական ֆինանսների վիճակագրություն	Դրամական և ֆինանսական վիճակագրություն	Բիզնես վիճակագրություն (արդյունաբերություն, շինարարություն, տրանսպորտ և կապ, առևտուր և ծառայություններ)	Զբաղվածության վիճակագրություն	Արտաքին առևտրի վիճակագրություն	Ժողովրդագրություն	Սոցիալական վիճակագրություն (աղքատություն, առողջապահություն, կրթություն և այլ)	Շրջակա միջավայր	Գյուղատնտեսություն	այլ
1	Պետական կառավարման մարմիններ	100	7.6	9.9	8.1	5.1	15.2	9.1	3.3	9.6	8.6	5.1	12.3	6.1
2	Ֆինանսական կազմակերպություններ	100	6.9	12.1	10.3	29.3	17.2	1.7	5.2	5.2	3.4	0.1	5.2	3.4
3	Գործարար համայնք	100	2.9	19.1	3.8	6.7	26.7	4.8	4.8	7.6	5.7	3.7	11.4	2.8
4	Արհմիություններ	100	-	7.7	7.7	-	7.7	23.1	-	15.4	30.7	-	7.7	-
5	Լրատվամիջոցներ	100	5.4	10.8	5.4	5.4	6.8	12.2	4.1	13.5	13.5	10.7	6.8	5.4
6	Քաղաքացիական հանրություն (հասարակական կազմակերպություններ, անհատներ)	100	3.0	11.3	3.0	1.5	9.8	15.0	1.5	16.5	21.1	6.8	7.5	3.0
7	Հետազոտական հաստատություններ	100	8.0	16.0	-	4.0	20.0	12.0	-	12.0	12.0	8.0	8.0	-
8.	Գիտակրթական հաստատություններ	100	10.8	10.8	7.4	8.1	8.8	10.8	6.8	10.1	15.5	5.5	5.4	-
9.	Միջազգային կազմակերպություններ	100	8.1	12.2	6.8	5.4	9.5	10.8	8.1	10.8	12.2	5.3	8.1	2.7
10.	Այլ	100	5.4	14.3	1.8	3.6	17.9	8.9	-	10.7	10.7	3.4	5.4	17.9

Հարց 2. Ինչպիսի՞ պաշտոնական վիճակագրություն եք Դուք օգտագործում.

%-ով ընդամենի նկատմամբ

N/N	Վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերը	Ազգային հաշիվներ (ՀՆԱ)	Գների վիճակագրություն	Պետական ֆինանսների վիճակագրություն	Դրամական և ֆինանսական վիճակագրություն	Բիզնես վիճակագրություն(արդյունաբերություն, շինարարություն, տրանսպորտ և կապ, առևտուր և ծառայություններ)	Զբաղվածության վիճակագրություն	Արտաքին առևտրի վիճակագրություն	Ժողովրդագրություն	Սոցիալական վիճակագրություն (աղքատություն, առողջապահություն, կրթություն և այլ)	Շրջակա միջավայր	Գյուղատնտեսություն	այլ
ԸՆԴԱՄԵՆԸ		100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100
1	Պետական կառավարման մարմիններ	41.7	30.7	47.1	29.0	39.5	34.0	31.0	33.0	27.2	35.1	49.0	49.0
2	Ֆինանսական կազմակերպություններ	5.6	5.5	8.8	24.6	6.6	0.9	7.1	2.6	1.6	-	3.1	4.1
3	Գործարար համայնք	4.2	15.7	5.9	10.1	18.4	4.7	11.9	7.0	4.8	7.0	12.2	6.1
4	Արհմիություններ	-	0.8	1.5	-	0.7	2.8	-	1.7	3.2	-	1.0	-
5	Լրատվամիջոցներ	5.6	6.3	5.9	5.8	3.3	8.5	7.1	8.7	8.0	14.0	5.1	8.2
6	Քաղաքացիական հանրություն (հասարակական կազմակերպություններ, անհատներ)	5.6	11.8	5.9	2.9	8.6	18.9	4.8	19.1	22.4	15.8	10.2	8.2
7	Հետազոտական հաստատություններ	2.8	3.1	-	1.4	3.3	2.8	-	2.6	2.4	3.5	2.0	-
8.	Գիտակրթական հաստատություններ	22.2	12.6	16.2	17.4	8.6	15.1	23.8	13.0	18.4	14.0	8.2	-
9.	Միջազգային կազմակերպություններ	8.3	7.1	7.4	5.8	4.6	7.5	14.3	7.0	7.2	7.0	6.1	4.1
10.	Այլ	4.0	6.4	1.3	3.0	6.4	4.8	-	5.3	4.8	3.6	3.1	20.3

%-ով ընդամենի նկատմամբ

N/N	Վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերը	Ընդամենը	Հարց 3. Ի՞նչ եղանակով եք ստանում վիճակագրական տեղեկատվությունը.					
			փոստով	Էլեկտրոնային փոստով	հեռախոսով	ինտերնետով	Ծառայության գրադարանից	հանդիպումներից, մամուլի ասուլիսներից
	ԸՆԴԱՄԵՆԸ	100	6.0	12.1	5.3	48.0	9.2	19.4
1	Պետական կառավարման մարմիններ	100	10.3	17.0	7.7	39.2	10.3	15.5
2	Ֆինանսական կազմակերպություններ	100	-	-	-	64.0	16.0	20.0
3	Գործարար համայնք	100	1.9	13.0	3.7	55.5	7.4	18.5
4	Արհմիություններ	100	-	14.3	-	42.9	14.3	28.5
5	Լրատվամիջոցներ	100	3.4	6.9	3.4	41.4	10.3	34.6
6	Քաղաքացիական հանրություն (հասարակական կազմակերպություններ, անհատներ)	100	2.6	5.2	2.6	58.4	9.1	22.1
7	Հետազոտական հաստատություններ	100	-	23.5	5.9	47.1	5.9	17.6
8.	Գիտակրթական հաստատություններ	100	1.7	6.9	3.5	58.6	10.3	19.0
9.	Միջազգային կազմակերպություններ	100	9.1	24.2	15.2	30.3	3.0	18.2
10.	Այլ	100	10.8	2.7	-	56.8	5.4	24.3

%-ով ընդամենի նկատմամբ

N/N	Վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերը	Հարց 3. Ի՞նչ եղանակով եք ստանում վիճակագրական տեղեկատվությունը.					
		փոստով	Էլեկտրոնային փոստով	հեռախոսով	ինտերնետով	Ծառայության գրադարանից	հանդիպումներից, մամուլի ասուլիսներից
	ԸՆԴԱՄԵՆԸ	100	100	100	100	100	100
1	Պետական կառավարման մարմիններ	62.5	51.6	53.6	29.8	40.8	29.1
2	Ֆինանսական կազմակերպություններ	-	-	-	6.3	8.2	4.9
3	Գործարար համայնք	3.1	10.9	7.1	11.8	8.2	9.7
4	Արհմիություններ	-	1.6	-	1.2	2.0	1.9
5	Լրատվամիջոցներ	3.1	3.1	3.6	4.7	6.1	9.7
6	Քաղաքացիական հանրություն (հասարակական կազմակերպություններ, անհատներ)	6.3	6.3	7.1	17.6	14.3	16.6
7	Հետազոտական հաստատություններ	-	6.3	3.6	3.1	2.0	2.9
8.	Գիտակրթական հաստատություններ	3.1	6.3	7.1	13.3	12.3	10.7
9.	Միջազգային կազմակերպություններ	9.4	12.4	17.9	4.0	2.0	5.8
10.	Այլ	12.5	1.5	-	8.2	4.1	8.7

%-ով քննաձևի նկատմամբ

N/N	Վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերը	Հարց 4. Արդյո՞ք բավարարում է վիճակագրական տեղեկատվության տարածման եղանակը.		Հարց 5. Ի՞նչ հաճախականությամբ եք օգտվում վիճակագրական տեղեկատվությունից.		
		այո	ոչ	պարբերաբար	ոչ պարբերաբար	իրավիճակային
	ԸՆԴԱՍԵՆԸ	100	100	100	100	100
1	Պետական կառավարման մարմիններ	34.1	28.9	38.1	26.3	27.2
2	Ֆինանսական կազմակերպություններ	5.9	3.9	7.2	5.3	2.4
3	Գործարար համայնք	11.4	9.7	11.2	8.8	12.5
4	Արհմիություններ	1.4	1.9	1.5	1.7	1.1
5	Լրատվամիջոցներ	3.4	9.6	3.0	7.0	5.7
6	Քաղաքացիական հանրություն (հասարակական կազմակերպություններ, անհատներ)	15.5	19.1	14.7	19.2	17.0
7	Հետազոտական հաստատություններ	3.1	3.8	3.0	5.3	2.4
8.	Գիտակրթական հաստատություններ	12.4	15.4	12.7	12.3	13.6
9.	Միջազգային կազմակերպություններ	3.1	1.9	3.0	5.3	1.1
10.	Այլ	9.7	5.8	5.6	8.8	17.0

%-ով ընդամենի նկատմամբ

N/N	Վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերը	Հարց 4. Արդյո՞ք բավարարում է վիճակագրական տեղեկատվության տարածման եղանակը.			Հարց 5. Ի՞նչ հաճախականությամբ եք օգտվում վիճակագրական տեղեկատվությունից.			
		Ընդամենը	այո	ոչ	Ընդամենը	պարբերաբար	ոչ պարբերաբար	իրավիճակային
	Ընդամենը	100	84.8	15.2	100	57.6	16.7	25.7
1	Պետական կառավարման մարմիններ	100	86.8	13.2	100	65.8	13.2	21.0
2	Ֆինանսական կազմակերպություններ	100	89.5	10.5	100	73.7	15.8	10.5
3	Գործարար համայնք	100	86.8	13.2	100	57.9	13.2	28.9
4	Արհմիություններ	100	80.0	20.0	100	60.0	20.0	20.0
5	Լրատվամիջոցներ	100	66.7	33.3	100	40.0	26.7	33.3
6	Քաղաքացիական հանրություն (հասարակական կազմակերպություններ, անհատներ)	100	81.8	18.2	100	52.7	20.0	27.3
7	Հետազոտական հաստատություններ	100	81.8	18.2	100	54.5	27.3	18.2
8.	Գիտակրթական հաստատություններ	100	81.8	18.2	100	56.8	15.9	27.3
9.	Միջազգային կազմակերպություններ	100	90.0	10.0	100	60.0	30.0	10.0
10.	Այլ	100	90.3	9.7	100	35.5	16.1	48.4

%-ով ընդամենի նկատմամբ

N/N	Վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերը	Ընդամենը	Հարց 6. Ի՞նչ նպատակներով եք օգտագործում պաշտոնական վիճակագրությունը					
			ընթացիկ զարգացումների վերլուծություն կարճաժամկետ որոշումների համար	միտումների վերլուծություն երկարաժամկետ քաղաքականության ձևավորման համար	էկոնոմետրիկ մոդելների կառուցում և կանխատեսումներ	հետազոտական նպատակներ	ընդհանուր տնտեսագիտական տեղեկատվություն	այլ
	Ընդամենը	100	20.7	8.0	6.1	14.9	30.3	20.0
1	Պետական կառավարման մարմիններ	100	26.5	8.2	6.7	14.2	27.5	16.9
2	Ֆինանսական կազմակերպություններ	100	25.0	12.5	6.2	12.5	28.1	15.7
3	Գործարար համայնք	100	31.1	5.0	5.0	8.1	31.1	19.7
4	Արհմիություններ	100	25.0	25.0	-	-	12.5	37.5
5	Լրատվամիջոցներ	100	17.3	4.4	-	21.8	39.1	17.4
6	Քաղաքացիական հանրություն (հասարակական կազմակերպություններ, անհատներ)	100	15.1	8.2	4.1	9.6	35.7	27.3
7	Հետազոտական հաստատություններ	100	13.3	-	13.3	40.0	26.7	6.7
8.	Գիտակրթական հաստատություններ	100	7.3	4.4	7.3	22.1	36.8	22.1
9.	Միջազգային կազմակերպություններ	100	19.4	22.2	11.1	25.0	19.4	2.9
10.	Այլ	100	10.3	2.6	5.1	7.7	33.3	41.0

%-ով ընդամենի նկատմամբ

N/N	Վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերը	Հարց 6. Ի՞նչ նպատակներով եք օգտագործում պաշտոնական վիճակագրությունը					
		ընթացիկ զարգացումների վերլուծություն կարճաժամկետ որոշումների համար	միտումների վերլուծություն երկարաժամկետ քաղաքականության ձևավորման համար	էկոնոմետրիկ մոդելների կառուցում և կանխատեսումներ	հետազոտական նպատակներ	ընդհանուր տնտեսագիտական տեղեկատվություն	այլ
	Ընդամենը	100	100	100	100	100	100
1	Պետական կառավարման մարմիններ	45.6	36.3	38.2	34.1	32.3	30.0
2	Ֆինանսական կազմակերպություններ	7.0	9.1	5.9	4.9	5.4	4.5
3	Գործարար համայնք	16.7	6.9	8.9	6.1	11.3	11.0
4	Արհմիություններ	1.8	4.5	-	-	0.6	2.7
5	Լրատվամիջոցներ	3.5	2.2	-	6.1	5.4	3.7
6	Քաղաքացիական հանրություն (հասարակական կազմակերպություններ, անհատներ)	9.7	13.7	8.9	8.6	15.6	18.1
7	Հետազոտական հաստատություններ	1.8	-	5.9	7.4	2.3	0.9
8.	Գիտակրթական հաստատություններ	4.3	6.9	14.6	18.4	15.0	13.7
9.	Միջազգային կազմակերպություններ	6.1	18.2	11.7	10.5	4.2	0.9
10.	Այլ	3.5	2.2	5.9	3.9	7.9	14.5

%-ով ընդամենի նկատմամբ

N/N	Վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերը	Ընդամենը	Հարց 7. Արդյո՞ք առկա պաշտոնական վիճակագրությունը բավարարում է Ձեր նախապատվային կարիքները				
			ամբողջովին	հիմնականում	մասամբ ոչ	մասամբ այո	չի բավարարում
	Ընդամենը	100	12.9	49.4	7.9	27.2	2.6
1	Պետական կառավարման մարմիններ	100	9.6	53.5	10.5	23.7	2.7
2	Ֆինանսական կազմակերպություններ	100	21.1	47.3	-	31.6	-
3	Գործարար համայնք	100	13.2	34.2	10.5	39.5	2.6
4	Արհմիություններ	100	-	60.0	20.0	20.0	-
5	Լրատվամիջոցներ	100	6.7	53.3	13.3	26.7	-
6	Քաղաքացիական հանրություն (հասարակական կազմակերպություններ, անհատներ)	100	14.5	49.1	1.8	31.0	3.6
7	Հետազոտական հաստատություններ	100	45.4	18.2	-	36.4	-
8.	Գիտակրթական հաստատություններ	100	13.6	45.5	9.1	27.3	4.5
9.	Միջազգային կազմակերպություններ	100	-	80.0	20.0	-	-
10.	Այլ	100	12.9	58.1	3.2	22.6	3.2

%-ով ընդամենի նկատմամբ

N/N	Վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերը	Հարց 7. Արդյո՞ք առկա պաշտոնական վիճակագրությունը բավարարո՞ւմ է Ձեր նախապատվային կարիքները.				
		ամբողջովին	հիմնականում	մասամբ ոչ	մասամբ այո	չի բավարարում
	Ընդամենը	100	100	100	100	100
1	Պետական կառավարման մարմիններ	25.0	36.1	44.5	29.0	33.3
2	Ֆինանսական կազմակերպություններ	9.1	5.3	-	6.5	0.1
3	Գործարար համայնք	11.4	7.7	14.8	16.1	11.1
4	Արհմիություններ	-	1.8	3.7	1.1	-
5	Լրատվամիջոցներ	2.3	4.7	7.4	4.3	-
6	Քաղաքացիական հանրություն (հասարակական կազմակերպություններ, անհատներ)	18.1	16.0	3.7	18.3	22.2
7	Հետազոտական հաստատություններ	11.4	1.2	-	4.3	-
8.	Գիտակրթական հաստատություններ	13.6	11.8	14.8	12.9	22.2
9.	Միջազգային կազմակերպություններ	-	4.7	7.4	-	-
10.	Այլ	9.1	10.7	3.7	7.5	11.1

%-ով քննամենի նկատմամբ

N/N	Վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերը	Ընդամենը	Հարց 8. Արդյո՞ք ծանոթ եք պաշտոնական վիճակագրության մեթոդաբանությանը.					Ընդամենը	Հարց 9. Արդյո՞ք տեղյակ եք, որ առկա է հանրայնորեն տարածվող վիճակագրական հրապարակումների օրացույց, համաձայն որի կանխավ հայտարարվում են հրապարակման ժամկետները	
			ամբողջովին	հիմնականում	մասամբ ոչ	մասամբ այո	ոչ		այո	ոչ
	Ընդամենը	100	2.9	38.9	14.1	36.4	7.7	100	57.3	42.7
1	Պետական կառավարման մարմիններ	100	2.6	43.0	7.0	41.3	6.1	100	60.5	39.5
2	Ֆինանսական կազմակերպություններ	100	-	47.4	42.1	10.5	-	100	78.9	21.1
3	Գործարար համայնք	100	7.9	28.9	15.8	39.5	7.9	100	47.4	52.6
4	Արհմիություններ	100	-	60.0	-	20.0	20.0	100	60.0	40.0
5	Լրատվամիջոցներ	100	-	33.3	6.7	46.7	13.3	100	53.3	46.7
6	Քաղաքացիական հանրություն (հասարակական կազմակերպություններ, անհատներ)	100	1.8	36.4	7.3	38.1	16.4	100	41.8	58.2
7	Հետազոտական հաստատություններ	100	-	-	9.0	91.0	-	100	3.6	96.4
8.	Գիտակրթական հաստատություններ	100	6.8	43.2	25.0	22.7	2.3	100	63.6	36.4
9.	Միջազգային կազմակերպություններ	100	-	70.0	20.0	-	10.0	100	80.0	20.0
10.	Այլ	100	-	32.3	25.8	35.4	6.5	100	54.8	45.2

%-ով քննամենի նկատմամբ

N/N	Վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերը	Հարց 8. Արդյո՞ք ծանոթ եք պաշտոնական վիճակագրության մեթոդաբանությանը.					Հարց 9. Արդյո՞ք տեղյակ եք, որ առկա է հանրայնորեն տարածվող վիճակագրական հրապարակումների օրացույց, համաձայն որի կանխավ հայտարարվում են հրապարակման ժամկետները	
		ամբողջովին	հիմնականում	մասամբ ոչ	մասամբ այո	ոչ	այո	ոչ
	Ընդամենը	100	100	100	100	100	100	100
1	Պետական կառավարման մարմիններ	30.0	36.8	16.7	37.9	26.9	35.3	30.8
2	Ֆինանսական կազմակերպություններ	-	6.8	16.7	1.6	-	7.6	2.7
3	Գործարար համայնք	30.0	8.3	12.4	12.1	11.5	9.2	13.7
4	Արհմիություններ	-	2.3	-	0.8	3.8	1.5	1.4
5	Լրատվամիջոցներ	-	3.6	2.1	5.6	7.8	4.1	4.9
6	Քաղաքացիական հանրություն (հասարակական կազմակերպություններ, անհատներ)	10.0	15.0	8.3	16.9	34.6	11.7	21.9
7	Հետազոտական հաստատություններ	-	-	2.1	8.1	-	3.5	2.7
8.	Գիտակրթական հաստատություններ	30.0	14.3	20.8	8.1	3.8	14.3	10.9
9.	Միջազգային կազմակերպություններ	-	5.4	4.2	-	3.8	4.1	1.4
10.	Այլ	-	7.5	16.7	8.9	7.8	8.7	9.6

%-ով ընդամենի նկատմամբ

N/N	Վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերը	Ընդամենը	Հարց 10. Ելնելով Ձեր փորձառությունից, արդյո՞ք պաշտոնական վիճակագրությունը հրապարակվում է հայտարարված ժամկետներում.		Ընդամենը	Հարց 11. Տեղյա՞կ եք վիճակագրական ցուցանիշների վերանայումների քաղաքականությանը.	
			այո	ոչ		այո	ոչ
	Ընդամենը	100	89.2	10.8	100	36.8	63.2
1	Պետական կառավարման մարմիններ	100	87.7	12.3	100	43.9	56.1
2	Ֆինանսական կազմակերպություններ	100	100.0	-	100	36.8	63.2
3	Գործարար համայնք	100	92.1	7.9	100	36.8	63.2
4	Արհմիություններ	100	100.0	-	100	20.0	80.0
5	Լրատվամիջոցներ	100	66.7	33.3	100	53.3	46.7
6	Քաղաքացիական հանրություն (հասարակական կազմակերպություններ, անհատներ)	100	90.9	9.1	100	27.3	72.7
7	Հետազոտական հաստատություններ	100	90.9	9.1	100	54.5	45.5
8.	Գիտակրթական հաստատություններ	100	88.6	11.4	100	34.1	65.9
9.	Միջազգային կազմակերպություններ	100	90.0	10.0	100	50.0	50.0
10.	Այլ	100	90.3	9.7	100	22.6	77.4

%-ով քննամենի նկատմամբ

N/N	Վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերը	Հարց 10. Ելնելով Ձեր փորձառությունից, արդյո՞ք պաշտոնական վիճակագրությունը հրապարակվում է հայտարարված ժամկետներում.		Հարց 11. Տեղյա՞կ եք վիճակագրական ցուցանիշների վերանայումների քաղաքականությանը.	
		այո	ոչ	այո	ոչ
	Ընդամենը	100	100	100	100
1	Պետական կառավարման մարմիններ	32.8	37.9	39.7	29.6
2	Ֆինանսական կազմակերպություններ	6.2	-	5.4	6.5
3	Գործարար համայնք	11.4	8.1	11.1	11.2
4	Արհմիություններ	1.6	-	0.7	1.8
5	Լրատվամիջոցներ	3.3	13.5	6.3	3.2
6	Քաղաքացիական հանրություն (հասարակական կազմակերպություններ, անհատներ)	16.4	13.5	11.8	18.5
7	Հետազոտական հաստատություններ	3.3	2.7	4.8	2.3
8.	Գիտակրթական հաստատություններ	12.8	13.5	10.9	13.4
9.	Միջազգային կազմակերպություններ	3.0	2.7	3.9	2.3
10.	Այլ	9.2	8.1	5.4	11.2

%-ով ընդամենի նկատմամբ

N/N	Վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերը	Ընդամենը	Հարց 12. Ինչպե՞ս եք գնահատում պաշտոնական վիճակագրության որակը.					
			շատ բարձր	բարձր	միջին	ցածր	շատ ցածր	կարծիք չկա
	Ընդամենը	100	4.7	41.5	45.9	4.1	0.3	3.5
1	Պետական կառավարման մարմիններ	100	4.4	39.5	50.0	4.4	-	1.7
2	Ֆինանսական կազմակերպություններ	100	15.8	31.6	42.1	-	-	10.5
3	Գործարար համայնք	100	2.6	42.1	44.7	8.0	-	2.6
4	Արհմիություններ	100	-	60.0	40.0	-	-	-
5	Լրատվամիջոցներ	100	6.7	33.3	33.3	20.0	-	6.7
6	Քաղաքացիական հանրություն (հասարակական կազմակերպություններ, անհատներ)	100	3.6	45.5	38.2	3.6	-	9.1
7	Հետազոտական հաստատություններ	100	-	36.4	63.6	-	-	-
8.	Գիտակրթական հաստատություններ	100	6.8	34.1	54.5	-	2.3	2.3
9.	Միջազգային կազմակերպություններ	100	-	70.0	30.0	-	-	-
10.	Այլ	100	3.2	51.7	41.9	3.2	-	-

%-ով ընդամենի նկատմամբ

N/N	Վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերը	<p>Հարց 12. Ինչպե՞ս եք գնահատում պաշտոնական վիճակագրության որակը.</p>					
		շատ բարձր	բարձր	միջին	ցածր	շատ ցածր	կարծիք չկա
	Ընդամենը	100	100	100	100	100	100
1	Պետական կառավարման մարմիններ	31.2	31.7	36.3	35.7	-	16.7
2	Ֆինանսական կազմակերպություններ	18.7	4.2	5.1	-	-	16.4
3	Գործարար համայնք	6.3	11.3	10.8	21.5	-	8.4
4	Արհմիություններ	-	2.0	1.3	-	-	-
5	Լրատվամիջոցներ	6.3	3.5	3.2	21.5	-	8.4
6	Քաղաքացիական հանրություն (հասարակական կազմակերպություններ, անհատներ)	12.5	17.6	13.4	14.2	-	41.7
7	Հետազոտական հաստատություններ	-	2.8	4.4	-	-	-
8.	Գիտակրթական հաստատություններ	18.7	10.6	15.3	-	100.0	8.4
9.	Միջազգային կազմակերպություններ	-	4.9	1.9	-	-	-
10.	Այլ	6.3	11.4	8.3	7.1	-	-

Ձ Ե Կ ՈՒ Յ Ց
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ
2014 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ

Թողարկման պատասխանատու՝

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության
վիճակագրական տեղեկատվության տարածման
և հասարակայնության հետ կապերի բաժին